**417. ԲՆԽ.** *Փառուաաա վանք. եկեղեցու մեջ ընկած փոքրիկ խաչքարի տակին. 2 տ.*

ՅԻՇԷՍԲԽԱՉՍ·ՏՐ
ՅԱԿՈԲԻՆ ԹՌՄ

ՅԻՇ(Ա)ՏԱԿ(Է) ՍԲ ԽԱՉՍ ՏՐ ՅԱԿՈԲԻՆ. ԹՎ. ։ՌՄ։

*Խաչքարն առանց պոչուկի է, պատի մեջ ագուցվելու համար չինված. Նախնական տեղն անհայտ է։*

**418. ԵՂՎԱՐԴ** *(հնում Աղահորդ) գյուղամիջի եկեղեցու բակի գերեզմանատան հարավային եզրին Թորոս իշխանի գերեզմանաքարի վրա.*

ԿԱՁՄՈՂԲԱՒՐՈԱՏ
ԹՎԱԿԱՆ Ռ ՃԳ

ԿԱՁՄՈՂ ԲԱՒՐՈԱՏ. ԹՎԱԿԱՆ ։ՌՃԳ։

*Արձանագրությունը եղել է քարի շրթունքին և երկար. ամբողջովին ջարդոտված է. Մնացածից վերծանելին է միայն ընթեռնելի։ Թվականը, որը շատ որոշ է քարի վրա, չի համապատասխանում Թորոս իշխանի սպանության ժամանակին, որը տեղի է ունեցել 1724 թ. հավանաբար թվականի մեջ մոռացել է տասնավոր Հ—70 գրել փորագրողը։*

**419. ԵՂՎԱՐԴ.** *գյուղամիջի եկեղեցու հարավային մուտքի բարավորի վրա։*

ԹՌՃԽԹ

ԹՎ. ։ՌՃԽԹ։

**420. ԵՂՎԱՐԴ** *գյուղամիջի եկեղեցու հարավային պատի մեջ արտաքուստ, ագուցված խաչքարի քիվին.*

ԵՍԱՂԱՅՍ·ԱԿԷՍ ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ ՏՊՍ ՈՐԴԻ Մ ՂԱՐԱԽԱՆԻՆ

ԵՍ ԱՂԱՑՍ ․․․ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ (ՏԱՊԱՆՍ ՈՐԴԻ ԻՄ ՂԱՐԱԽԱՆԻՆ։

**421. ՈՒԺԱՆԻՍ.** *(հնում ՎԺԱՆԻՍ կամ ՎԱԺՈՒՆԻՔ)—գյուղից մոտ մեկ և կես կիլոմետր հյուսիս ավերակ հին Ուժանիս գյուղատեղիի եկեղեցու տրևմտյան մուտքի կամարակալ քարին, 7 տ.*

ԿԱՆԳՆԵ
ԱՑՄԲՑԵԿԵՂԵ
ՑԻՍՏՐԸՌԸՍՏԱԿ
ԷՆՑԻՇԱՏԱԿՀՈԳԻՈ
ՅՆԻԻՐԵԻԾՆՕՂԱՑԻԻՐՈՑ:
ՅԻՇԵՑԷՔՈՒՍՏԱՋԳՐԻԳՈՐՆԻՔՍ
ԹՎԿՆ·ՌՒԸ·ՎԵՐՋԱՄԻՆՇԱՀԱՊԱՁԻՆ

ԿԱՆԳՆԵ|ԱՑ ՍԲ ՑԵԿԵՂԵ|ՑԻՍ ՏՐ ԸՌԸՍՏԱԿ|ԷՍՆ. ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅՆ ԻԻՐ ԵՒ ԾՆՕՂԱՑ ԻԻՐՈՑ։| ՅԻՇԵՑԷՔ ՈՒՍՏԱ ՋԳՐԻԳՈՐՆ Ի ՔՍ. | ԹՎԱԿԱՆԻՆ ։ՌՒԸ։, ՎԵՐՋ ԱՄԻՆ ՇԱՀԱՊԱՁԻՆ։